Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի
2022թ. փետրվարի 18-ի N 2-02/22/4 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ
## ՇՏՀ Որակի ապահովման բաժնի
## 2022թ. հունվար – դեկտեմբեր ժամանակահատվածի համար

| Թիվ | ՌԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ | ՆՊԱՏԱԿԸ/ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ԱԱ) | ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՔԱՅԼԵՐԸ | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ/ԺԱՄԿԵՏ | | ՀԱՄԱԳՈՐԾԱԿ-ՑՈՒԹՅԱՄԲ | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ | ՆՇՈՒՄ-ՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Պատասխա-նատու | Կատարողներ | | | |
| 1 | 1.1.3 Բոլոր մասնագիտությունների համար ներդնել որակյալ գործնական հմտություններով մասնագետների պատրաստման, շուկայի կոնկրետ պահանջները բավարարող, բակալավրի և մագիստրատուրայի կիրառական կրթական ծրագրեր: | **Նպատակը.** Որակյալ կրթական ծրագրերի առկայություն **ԱԱ.** Որակյալ գործնական հմտություններով մասնագետների պատրաստման | 1. Մշակել մասնագիտական կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող կարգ<br>2. Մշակել և ներդնել կրթական ծրագրերի մշակման կարգ<br>3. Ձևավորել աշխատանքային խմբեր ըստ առանձին կրթական ծրագրերի<br>4. Մշակել և ներդնել շուկայի պահանջները բավարարող բակալավրի կրթական ծրագրեր | Է. Ս. Շամխալովա 01.04.2022-20.12.2022 | Մ. Ս. Պետրոսյան | Պրոռեկտորներ, Դեպարտամենտների ղեկավարներ, ամբիոնի վարիչներ | 1. Մասնագիտական կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող գործող կարգ<br>2. Կրթական ծրագրերի մշակման գործող կարգ<br>3. Վերանայված և բերլավված բակալավրի կրթական ծրագրեր | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 1.2.3. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ ( այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով: | **Նպատակը**.<br>Ազնիվ և արդար ուսումնառությանն աջակցում:<br>**ԱԱ**. Առանց գրագողության ազնիվ ուսումնառություն ապահովող մեխանիզմներ: | 1. Գրագողությունը կանխող և ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմների մշակում<br>2.Առաջարկված մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրում, գնահատում, վերլուծություն և առաջարկությունների հավաքագրում:<br>3.Վերլուծության արդյունքների հիման վրա բարելավման առաջարկությունների փաթեթի մշակում, մեխանիզմների վերանայում: | Է. Ս. Շամխալովա<br><br>10.04.2022-10.10.2022 | Մ. Կ. Միրզոյան | ՈՒՄԲ<br>Ֆակուլտետներ<br>Դեպարտամենտներ<br>,<br>Ամբիոններ | 1. Ակադեմիական ազնվության գործող կարգ:<br>2. Ակադեմիական ազնվության կիրառվող մեխանիզմների արդյունավետությունից բավարարված ուսանողներ և դասախոսներ:<br>4. 3. Մշակված մեխանիզմների միջոցով գրագողության կանխարգելման օրինակներ: | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 3.4.1. Համալսարանի կայէջը դարձնել հասանելի արտերկրի օգտատերերին՝ կատարելագործելով օտար լեզվով տեղադրվող նյութերը: | **Նպատակը.** Հանրային ներգրավման ապահովում և հասարակայնության հետ կապերի խթանում:<br>**ԱԱ.** Մշտապես թարմացվող, հարուստ և արդի բովանդակությամբ պաշտոնական կայք, հանրության բավարարված արձագանքներ: | 1.Ապահովել ուսումնական գործընթացին վերաբերյալ հանրությանը և ուսանողներին տրամադրվող տեղեկատվության արդիականությունը :<br>2. Մշտապես լուսաբանել նորությունները և իրադարձությունները, ապահովել Համալսարանի գործունեության և գործընթացների կազմակերպման վերաբերյալ հայտարարություններով:<br>3. Արտաքին և ներքին շահակիցներին ապահովել թարմ, բովանդալից և արդի տեղեկատվությամբ և տարածել համացանցային տարբեր հարթակներում:<br>4. Անխափան կառավարել Համալսարանի պաշտոնական կայքը:<br>5. Ուսումնասիրել ներքին և արտաքին շահակիցների բավարարվածությունը կայքի կառուցվածքից, տեղեկատվության լիարժեքությունից, թափանցիկությունից, ստացման հարմարավետությունից և կայքի գրավչությունից: | Է. Ս. Շամխալովա պարբերաբար<br><br>01.05.2022-10.11.2022 | Մ. Կ. Միրզոյան | 1.Հրատարակչության լրատվության, տեխնիկական սպասարկման և հասարակյնության կապերի բաժին,<br>2. Արտաքին կապերի բաժին<br>3. Լեզուների ամբիոն | 1.Կայքի անխափան գործունեություն:<br>2.Կայքի կառուցվածքից, լիարժեք և թափանցիկ տեղեկատվության տրամադրումից և ստացման հարմարավետությունից, նորությունների լուսաբանումից ու կայքի գրավչությունից արարված ներքին և արտաքին շահակիցներ: 3. Կայքի այցելությունների և հղումների ավելացում 30%-ով: | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 4.2.1. Բարելավել Համալսարանի կադրային կառուցվածքը՝ հաշվի առնելով կառավարման գործընթացները ու ռեսուրսային ապահովվածության քաղաքականությունը : | **Նպատակը**. Որակի ներքին ապահովման մեխանիզմների ներդրում դասընթացների փաթեթների մշակման և կիրառման գործընթացներում: **ԱԱ**. Որակի ապահովման մեխանիզմներով համալրված դասընթացների փաթեթներ: | 1.Ուսումնասիրել ամբիոններում դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) առկայության վիճակը և վերլուծել որակի ապահովման մեխանիզմներով համալրելու մեթոդական ուղեցույցի 1-ին բաժնի գործարկման արդյունքները: | Է. Ս. Շամխալովա<br><br>01.09.2022-15.12.2022թ. | Մ. Ս. Պետրոսյան | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Դեպարտամենտի ղեկավարներ, Ամբիոնի վարիչներ | Որակի ապահովման մեխանիզմներով համալրված դասընթացների փաթեթներ բոլոր դասընթացների համար | |
| 5 | 4.2.2. Մշակել աշխատանքի նկարագրեր վարչական պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի համար: | **Նպատակը**. Բաժնի աշխա-տակիցների գործառույթների հստակեցում: **ԱԱ**. Իրենց գործառույթներին համապատասխան աշխատող բաժնի մասնագետներ: | 1.Մշակել բաժնի բոլոր պաշտոնների համար պաշտոնի անձնագիր՝ բաժնի կանոնադրությանը համապատասխան:<br>2. Պաշտոնի անձնագրի հիման վրա հստակեցնել աշխատակիցների գործառույթները:<br>3. Բաժնի գործունեությունը կազմակել առկա հաստիքներին և գործառույթ-ներին համապատասխան: | Է. Ս. Շամխալովա<br><br>15.11.2022թ. | Մ. Կ. Միրզոյան | Ռեկտոր, Հեռանկարային ծրագրերի մշակման և բարեփոխումների գծով պրոռեկտոր Կադրերի և ընդհանուր բաժին | Բաժնի պաշտոնների գործող (հաստատված) նկարագրեր: | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 8.3.3. Մշակել, իրականացնել և մշտապես կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ՝ որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և արդյունավետ կրթական միջավայր ապահովելու համար | **Նպատակը**. Կրթական ծրագրերի և դասընթացների որակի գնահատում **ԱԱ**. Որակյալ ուսումնառության կազմակերպում | 1.Ուսումնասիրել ՇՏՀ և այլ բուհերում կրթական ծրագրերի գնահատման գործող մեխանիզմները:<br>2.Մշակել կրթական ծրագրերի գնահատման համակարգ և կազմել կրթական ծրագրերի գնահատման համակարգ (հնարավորության դեպքում առցանց):<br>4.Ուսումնասիրել կրթական ծրագրերի խնդիրները, վերլուծել դրանք և առաջարկել դրանց լուծման ուղիներ:<br>5.Վերլուծել կրթական ծրագրի արդյունքները և դրա արդյունքում ստացված տեղեկատվության հավաստիությունը և օգտակարությունը: | Է.Ս. Շամխալովա<br><br>պարբերաբար | Մ.Կ Միրզոյան<br>Մ. Ս. Պետրոսյան | ՈՒՄԲ, Դեպարտամենտներ, Ամբիոններ | 1. Դասընթացների գնահատման գործող մեխանիզմ ամբիոններում և դեպարտամենտներում<br>2. Դասընթացների գնահատման գործող մեխանիզմ | |

Որակի ապահովման բաժնի պետ՝ Է.Շամխալովա